Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

ԹԵՄԱ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԹԵՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԹԱՄԱՐԱ ԹԱԴԵՎՈՍՍՅԱՆ

ԽՈՒՄԲ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԻԼԻԹ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԵՂԵԳՆԱՁՈՐ

2 0 22 թ.


Մարդու ամեն բանը
պետք է ներքին
դրդումից լինի, և ամեն
բան, որ զոռով է արված,
ոչ մի համ ու լազաթ չունի:

2 0 22 թ.

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ 3

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԵՐՊԱՐԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 4

ԱՄՓՈՓՈՒՄ 13

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 15

ՆԱԽԱԲԱՆ

Հովհ. Թումանյանը գրական ասպարեզ իջավ մեր ժողովրդի հազարամյա պատմության ամենածանր, ամենաողբերգական շրջանում,երբ թուրքական անլուր կոտորածների սարսափի տակ կենաց ու մահու պայքար մղող ժողովուրդը ճնշվեց ու ճմլվեց, երկատվեց ու զրկվեց բուն հայրենիքից: Նա խիստ դժգոհ էր իր ապրած ժամանակից, քանզի նոր դարաշրջանը իր հետ բերում էր նաև բարքերի անկում, մարդկային հարաբերությունների աղարտում, բարոյական արժեքների ոտնահարում: Մարդկային բոլոր տեսակի հարաբերությունների համար բարոյականը մշտապես եղել ու մնում է ամենանրբազգաց չափանիշը՝ լինի առօրեական, միջանձնային, քաղաքական ու ազգային: Թումանյանը սրտի ցավով նշում էր, որ կյանքը շեղվել է բնականոն հունից, ուստի հարկավոր է «բանտ դարձած» աշխարհում ելք փնտրել ազգի փրկության համար: «Երբ լավ մարդը օժտված է տաղանդով,- ասել է Գյոթեն,- նա միշտ էլ կաշխատի աշխարհի բարօրության համար.լինի դա արվեստագետ,բնագետ, բանաստեղծ կամ ուրիշ մի բան»:*[1]

Թումանյանը, ամբողջովին գտնվելով «պատմության շրջապտույտում», չէր կարող իրեն երջանիկ զգալ, քանզի ամենուրեք լսում էր հուսահատ հառաչ ու ողբաձայն հառաչանքներ: Պատահական չէ, որ բանաստեղծն իրեն համարում էր «խնդացող տխուր, սրտաբեկ ուրախ», « խորտակված ու հոգնած մարդ»:

Պատմության ամեն մի ժամանակաշրջան բնորոշվում է նրանով, թե ինչ վերաբերմունք ունի անցյալի մտածողների ու գեղագետների հանդեպ. ում է

[1] Էքերման, Զրույցներ Գյոթեի հետ, Երևան, 1975, էջ 372

մոռացության մատնում, ում է հիշում, ում է դիմում ամեն «աստծո օր»՝ նրանից ստանալու մարդուն, կյանքին, հայրենիքին, աշխարհին վերաբերող հարցերի իմաստուն պատասխանները:

Հովհաննես Թումանյանը այդպիսին էր իր՝ հայրենիքի և ժողովրդի միասնության գյուտով, Նարեկացին՝ Աստծո իշխանության հետ վեճի բռնված մարդու գյուտով, Խորենացին՝ հայոց պատմության գյուտով: Այս անունները անմահ են պատմության ճակատագրական պահերի բացառիկ խոր զգացողությամբ:

Մեր օրերում, երբ մեր հայրենիքի, մեր ժողովրդի առաջ կրկին ծառացավ հայրենիք-ժողովուրդ գոյատևման հարցը, նորից կարող ենք այցելել «թումանյանական պալատ» զարմանալ նրա արվեստի մաքրությամբ, հիմանալ նրա՝ սոցիալական և ազգային ցավերը հաղթահարելու լավատեսությամբ: Եվ որքան էլ դժվար ժամանակներ են, մենք պետք է հիանանք նրա՝ եզակի հավատով կյանքը և մարդուն փառաբանելու արվեստով:

Անհատական աշխատանքի նպատակն է վերլուծել հայրենիքի կերպարը Թումանյանի ստեղծագործություններում:

Աշխատանքը բաղկացած է նախաբանից, հիմնական մասից, վերջաբանից և գրականության ցանկից:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԵՐՊԱՐԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նա մեծ էր ավելի, քան եղավ:-Երկնքի նման ընդարձակ

Օվկիանի նման՝ իր ոգին ընդգրկել էր կյանքը անեզր:-

Եվ ոգու ափերին նստած՝ նա նայում էր հայացքով պայծառ,

Եվ որսում էր երգեր ու խոհեր, և տեսնում էր չքնաղ երազներ:

Եղիշե Չարենց

Թումանյանը չի մեծացել ապարանքներում, բազմալեզու գրքերի աշխարհում, ծնվել է հասարակ գյուղացու ընտանիքում: Նրա հարազատ գիրկը եղել է մի ծաղկուն բնություն, իսկական ուսուցիչները՝ շքեղ երևակայության տեր ցնցոտիապատ հեքիաթասացներ ու թափառական երգասացներ: Լուսնյակ գիշերներին՝ նահապետական անշուք խրճիթի առաջ գերաններին նստած, երեխաները վառվել են դարերից եկած հեքիաթներով, նրանց հոգին թևածել է չարի ու բարու կախարդական աշխարհներում: Այսպես է անցել Թումանյանի մանկությունը:

Թումանյանն իր նախորդների նման ծնվել է անշուք միջավայրում՝ չունենալով Մեծ դառնալու այն ամուր հենարանը, որ հետագայում ինքը ստեղծեց իր հետնորդների համար: Սակայն մեծ անցյալ ունեցող ազգը ուներ հզոր տարերք, և Թումանյանը հայ տարերքի այն հազվագյուտ զավակներից է, որ, հենվելով իր ժողովրդի բարոյական արժանիքների վրա, դարձավ այն եզակի մեծությունը, որ իր հոգու լույսը տվեց սերունդներին, իր բանստեղծական կտակը մարդու և կյանքի ներդաշնակության վեհ արտահայտություն են:

Հովհ. Թումանյանի ստեղծագործությունները մեր նորագույն գրականության ամենավստահելի, միշտ կենդանի թիկունքն են: Լինելով բազմաժանր գրող՝ նա ամենից առաջ բանաստեղծ է: Նա կարողացավ բացահայտել հայ մարդու ներքին դրաման ու երազները, ազգային երգին տվեց համամարդկային թռիչք: Իրավացի էր Եղիշե Չարենցը. Թումանյանը մեծ էր հողով, արյունով, խոր արմատներով, նրա հանճարեղ երգերում շողում էր իր երկրի արևը: Այդ արյունը, հողի բույրն ու երկրի արևային գույները, արմատները կարող են միայն հանճարեղ գրողի ստեղ-ծագործություններում երևան գալ:

Զուր չէ, որ Թումանյանը Ամենայն Հայոց բանաստեղծն է: Նրա գրչին պատկանող ամեն մի տող, բառ ու հնչյուն արտացոլում են հայ ժողովրդի ցավն ու ուրախությունը, մրմունջն ու ճիչը, հավատն ու հիասթափությունը:

Թումանյանն իր քնարերգության մեջ արծարծել է բազմաթիվ թեմաներ՝ հայրենասիրական, սոցիալական, քաղաքական, փիլիսոփայական, սիրային ու բնապաշտական: Նրա քնաերգությունը և՛ անձնական է, և՛ հասարարկական, քանի որ բանաստեղծն իր ժողովրդի ուրախությունն ու տխրությունն ընկալել է որպես սեփական զգացում: Նա ժողովրդի բախտի հետ է կապել իր ջերմ իղձերը.

Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով,

Քո ծաղիկներին ծաղիկ ավելացնեմ,

Այլ դառն հեծության հառաչանքներով

Էդ անդնախոր ձորերդ լցնեմ:*[2]

[2] Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր Հ1 , Սով գրող, Երևան, 1985, էջ35

Իրական կյանքի պատկերն ու սոցիալական անարդարության դեմ խտացված բողոքն են արտահայտված «Գութանի երգը», «Խրճիթում», «Ճախարակ» և այլ բանաստեղծություններում: Իսկ «Հին օրհնությունը» հայ ժողովրդի վշտի, ձգտումների ու երազանքների խտացումն է.

Ապրե՛ք, երեխե՛ք,

Բայց մեզ պես չապրեք…

Հարուստ ու բազմերանգ աշխարհ է Թումանյանի քնարերգությունը, որի հիմնական թեմաներից մեկը հայրենիքն է, նրա բանաստեղծական ներշնչանքի հիմնական աղբ-յուրը:

Դեռևս տասներեքամյա պատանի, «Օրորք» բանաստեղծության մեջ գրել է.

Մի պատկեր է նա տխուր,

Աչքերը՝ արցունք, ինքը՝ լուռ,

Մի սուր է նա սրտի մեջ,

Մեզ այրելու հուր անշեջ…

Դարասկզբի վայրիվերումները, որոնք ճակատագրական եղան մեր ժողովրդի համար, չէին կարող անտարբեր թողնել մեծ բանաստեղծին: Նա ազգային առաջնորդ դարձավ՝ իր գործունեության մեջ ներառելով հայ կյանքի բոլոր ոլորտները: Նրա կյանքի մի զգալի մասն անցավ ազգային վշտերի ու ողբերգությունների առաջադրած խոհերի մեջ՝ նրան պարտադրելով դառնալ հանրային գործիչ նաև: Խորտակվեց բանաստեղծի փխրուն հոգին, լցվեց կսկիծներով, մորմոքով, հեռացավ ողբերգական ու դաժան իրականությունից՝ մխրճվելով տիեզերական ոլորտները: Երբեմն իրենից անկախ մասնակցություն էր ունենում հասարակական ու քաղաքական գործերում: Մեծերի ու

փոքրերի, բոլոր տարիքների համար և ոչ մեկը մեր ժողովրդի հույզերն ու վիշտը չի երգել այնքան խորը,հարազատ, որքան Թումանյանը.

Հայի չար բախտը ինձ ներքև բերավ
Բարձր Գուգարքի ծաղկոտ սարերից,
Իմ հոգին լցրեց հառաչանք ու ցավ
Տխուր երգերի քնար տվավ ինձ:

Իզուր չէր, որ նա հանձաժողովներ էր ստեղծում կամ գլխավորում էր եղածները, աշխատում ամեն կերպ թեթևացնել հայոց ծանր վիշտը, որը բանաստեղծի հոգում մեծ նստվածք էր տվել, մի շարք բանաստեղծությունների հենքը դարձել.

Հայոց վիշտը անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին,
Էն սև ծովում տառապելով՝
Լող է տալիս իմ հոգին:

Բանաստեղծը, դարասկզբի քաղաքական թոհուբոհն աչքի առաջ ունենալով, տեսնելով հայ ժողովրդի դժխային վիճակը, վախ ուներ գալիք մութ օրերի հանդեպ, որն անհիմն չէ՝

Ոչ հատակն էր գտնում անվերջ
Ու ոչ հասնում երկնքին…
Հայոց վշտի մեծ ծովի մեջ
Տառապում է իմ հոգին:*[3]

[3] Հովի. Թումանյան, ԵԼԺ, 10հատորով, Հ1, Երևան, ԳԱ հրատ, 1988, էջ200

Սակայն պայծառ հոգիներին է միայն հատուկ լավատեսությունը: Հայոց կյանքի ծանր պայմաններում էլ Թումանյանը, երգելով Հայոց ծով վիշտը, չի կորցնում լավատեսությունը, գիտեր, որ «աշխարհն այսպես չի մնա», որ թեև վիրավոր ու ծեծկված, պիտի տեսնենք «հանուր կյանքի արշալույսը վառ հագած», որ Արարատի սուրբ լանջին կլինի « նոր կյանք, նոր երգերով, նոր խոսքով»:

Շատ քիչ բանաստեղծների մեջ, թերևս միայն Չարենցի, Սիամանթոյի և Տերյանի մի քանի գործերում կարող ենք գտնել անձնականի այնպիսի օրգանական ձուլվածք, ինչպես «Հայոց լեռներում» և «Հոգեհանգիստ» բանաստեղծություններում: Քաղաքական թեման հայրենասիրության ուժեղ ոլորտներից մեկն է, ուր Թումանյանն ստեղծել է գրական գոհարներ: «Հայոց լեռներում» բանաստեղծության մեջ մեր դարավոր խավար ճանապարհի, կրած անլուր զրկանքների, մեր ստեղծած գանձերի, անհամար վերքերի և... հույսերի մասին է: Հակառակ աղետների ու արհավիրքների՝ երբեք չի մարել ազատ կյանքի լուսեղ երազանքը.

Ու մեր աչքերը նաքում են կարոտ

Հեռու աստղերին

Երկնքի ծերին,

Թե երբ կբացվի պայծառ առավոտ

Հայոց լեռներում,

Կանաչ լեռներում:

Թումանյանը խորապես լավատես գրող է, դա բնական է. չէ՞ որ ամենամեծի մեջ ավելի ուժեղ են խմորվում ժողովրդական տրամադրությունները, հին ու նոր խոհերը: Բայց

չպետք է անտեսենք այդ լավատես բանաստեղծի ծանր դրաման, հոգու ամպամած պահերը, որոնք գալիս են ժողովրդի բախտից:

1915թ. համաշխարհային պատերազմի արյունոտ թաթը իջել էր Արևմտյան Հայաստանի վրա: Ավերվում էր հայրենիքը, մորթվում էր մի ողջ ժողովուրդ: Հունիսին նա Վանում էր, օգոստոսին՝ էջմիածնում, ուր ծովացել էր գաղթակա-նությունը: Հուսահատ վճռականությամբ բանաստեղծը փորձում էր դիմադրել աղետներին, օգնել համաճարակի բերանն ընկած ժողովրդին, սովահար մանուկներին: Նման պահերի ծնունդ է « Բարձրից» բանաստեղծությունը.

Իմ բարի սրտի էն մեծ խոհերից,

էն մեծ խոհերի անհուն խորերից

Կամեցավ ելավ իմ հզոր հոգին,

Որ բարձրից նայի Աստծու աշխարհքին…

Մարդկային կյանքի աններդաշնակության, գեղեցիկ աշխարհին հակադիր՝ մռայլ պատկերներով է սկիզբ առնում հոգեկան դրաման.

Եվ հայրենիքներն անձուկ նրա մեջ,

Եվ աստվածները նրանց զանազան,

Եվ սուրբերը խիստ, խտրող ու դաժան:

Թումանյանը փորձում է ընդհանրացնել ազգերի բախտի, հավատի ու նրա զոհերի մասին: Կյանքը խաթարվել է, ամենքը լափում են ամենքին, կյանքը դարձել է համատարած ցավ.

Տեսավ՝ ուտում են ամենքն ամենքին,

Ամեն հայրենիք՝ իրեն զավակին,

Եվ իր պաշտողին՝ ամեն մի աստված,

Եվ կյանքը տանջանք, ցավ համատարած:

Նույն ողբերգական տրամադրությունը շարունակվում է «Հոգեհանգիստ» բանաստեղծություն մեջ: Դա իսկապես մի հոգեհանգիստ է՝ մեռնող ժողովրդի զավակների, պատմությունից անհետացող մի ողջ ազգության ու հայրենիքի: Իսկ հայրենիքը, իրոք, մեռնում էր.

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին

Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ զոհերին,

Որ շեն ու քաղաք,որ սար ու հովիտ,ծովից մինչև ծով…

…Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ Մաիսի նման,

Կանչեցի թշվառ էն հոգիներին՝ ցրված հավիտյան

Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև ծովն Հայոց-

Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ:

… Հանգե~ք, իմ որբե~ր…Իզուր են հուզմունք,իզուր և անշահ…

Մարդակեր գազան մարդը դեռ երկար էսպես կմնա:

Թումանյանի այս բանաստեղծությունը մի սրտալի սուգ է՝ իր պարզության մեջ վսեմ: Սուգ, որ ալեկոծում է ընթերցողին, վշտի սարսուռով տեսնում ես կարծես, որ մի բարձր

ու խորունկ հոգի կանգնեց հայոց լեռների հանգույցում, անհուն ցավով հոգու հանգիստ է կարդում անմեղ զոհերին, որ ընկան հազար-հազարով,,:*[4]

Բայց Թումանյանը մեկն էր նաև այն քչերից, որոնք ուժ ունեին՝ դիմադրելու վշտին և համաշխարհային մարդակերությանը և հանուր երջանկության պատգամը բերելու սեփական ազգին:Հենց նա° կարող էր ասել ոչ միայն հոգեհանգստի, այլ նաև օրհնության խոսքը.

Ու պոետներ,որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով

Պիտի գովեն քո նոր կյանքը, նոր երգերով, նոր խոսքով,

Իմ նո՛ր հայրեիք,

Հզո՛ր հայրեիք…

Աննախադեպ աղետների օրերին, երբ թվում է հիմք չկար խոսելու հայոց հզոր հայրենիքի մասին, պայծառատես բանաստեղծը տեսնում է այն,ինչը շուտով պիտի իրականանար:

Բայց թե՞ ողբը, թե՞ զայրույթը բխում են մարդու նկատմամբ անսահման սիրուց և խոր ատելությունից դեպի անմարդկայինը: «Սերը դեպի հայրենիքը,- գրել է նա,- միաժամանակ պետք է լինի սեր դեպի մարդկությունը,որովհետև ամբողջ մարդկությունը մի ընտանիք է, ժողովուրդներն էլ էդ մեծ ընտանիքի անդամներն են» :

Թումանյանն ավելի խոր քան որևէ ուրիշ հայ գրող, ըմբռնեց հայ ժողովրդի ազգային գոյության և ազատագրության վճռական գործոնները: «Հայկական հարցի» լուծումը նա կապում էր հայրենիքի մարդկության կյանքում կատարվելիք մեծ

[4] Հովի. Թումանյան, երկերի ժողով, 4 հատորով, հատոր 1,1969, Ստ. Զորյանի ,,Առաջաբանը,,. Էջ 15

փոփոխությունների, մարդասիրության, ժողովուրդների խաղաղ կեցության և բարձր սկզբունքների հաղթանակի հետ:

Նա իր ստեղծագործության մեջ մարմնավորեց հայ ժողովրդի ազգային բնավորության լավագույն գծերը:Ինչքան էլ դժվար է կոնկրետ ցույց տալ այս կամ այն ազգի հոգևոր առանձնահատկություններն ու նրանց գեղարվեստական արտացոլումը, այնու-ամենայնիվ, իսկական արվեստագետի ստեղծագործության մեջ դրանք միշտ առկա են, և այնքան ավելի մեծ է գրողը, որքան իր երկերում ավելի խոր ու լայն է մարմնավորում այդ առանձնահատկությունները:

Եվ Թումանյանն իրավունք ուներ իր անձի և վաստակի մասին ասելու.

Քանի՛ ձեռքից եմ վառվել,

Վառվել ու հուր եմ դառել,

Հուր եմ դառել՝ լույս տվել,

Լույս տալով եմ սպառվել:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայրենիքի ողբերգության շահարկման թեմայում, ահավասիկ, տեսնում ենք հոգու անփոխարինելի դերը: Հովհ. Թումանյանը պատանեկան տարիքից կանգնեց հոգին և նյութը եզրագծող սահմանագծին՝ պատրաստ քննելու և տարբերակելու դրանք: Նրա ստեղծագործության մեջ առկա էին հայրենիքի կարոտով, երազներով ապրող, բնազուրկ, ճնշված, աստանդական, ցավ ունեցող հայ մարդու մասին մտքերը:

Թումանյանից հետո դժվար է նոր խոսք ասել հայ գրականության մեջ, առանց հաշվի առնելու և հենվելու արվեստագետի և ժողովրդի, պոեզիայի և իրականության փոխհարաբերության այն ըմբռնումների վրա, որ հաստատեց նա իր ստեղծագործությամբ:

Եվ այսօր էլ նա կանգնում է մեր առջև որպես կենդանի ապացույց այն հին ճշմարտության, որ իսկական արվեստի միակ և անփոխարինելի աղբյուրը ժողովրդի կյանքն է: Մեր օրերի դաժան իրականությունը, հինգ հազարից ավելի զոհերը, Արցախի ութսուն տոկոսի կորուստը մեզ ստիպում են մտածելու, որ 2021 թվականին Թումանյանի՝ Իսահակյանին գրած նամակի ժամանակաշրջանից ոչինչ չի փոխվել: Մեր երկիրը կրկին կանգնել է լինել-չլինելու բարդ խնդրի առջև. օրհասական այս պայմաններում սովորողները պետք է կարողանան ճանաչել և համադրել տարբեր սոցիալական ցանցերում առկա տեղեկատվությունը, գիտակցեն դրանց դերը, ցանկության դեպքում կարողանան արտահայտել սեփական մտքերն ու զգացմունքները, գիտակցեն իրենց վերաբերմունքի կարևորությունը, ինչպես նաև դրսևորեն մտավոր և ֆիզիկական կարողունակությունները զարգացնելու վարքագիծ:

Զարմանալի ժողովուրդ ենք…

Ազգի համար կարևոր պահերին միշտ հիշում ենք մեր մեծերին՝ Թումանյանին և Նժդեհին՝ նկատի ունենալով նրանց ժողովրդայնությունը և իմաստությունը, որոնք ժամանակի հետ երբեք չեն խամրում: Իսկ Թումանյանի մեծությունն ու վեհությունը ուզում ես առաջին հերթին պատասխանել Եղիշե Չարենցի խոսքերով.

Նա մեծ էր հողո՞վ, արյունո՞վ: Արմատներ ուներ նա հողում:

Իր երգերը- գեղջուկ նահրցու քրտինքով էր նա ողողում:

Հանճարեղ երգերում նրա իր երկրի արևն էր շողում:

Նա մեծ էր հողո՞վ, արյունո՞վ: Արմատներ ուներ նա հողում:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Էքերման. Զրույցներ Գյոթեի հետ,Երևան,1975,էջ 372

2.Թումանյան Հովհ.,ԵԼԺ, 10 հատորով,հ.1, Երևան, ԳԱ հրատ.,1988

3.Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու,հ.4 –րդ,Երևան,ԳԱ հրատ., 1988

4. Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան,ԳԱ հրատ., 1988

5. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու,հ.4,Երևան,1951

6. Հովհ., Թումանյանը ժամանակակիցների հուշերում,,, Երևան,1969

7. Հովհ. Թումանյան, Հրապարակումներ և ուսումնասիրություններ, հ.2, Երևան,1969

8.Հր.Թամրազյան,Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Երևան, Սով. Գրող, 1986

9.Համացանց, Վիքիպեդիա